Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 24 բարեգործական ծրագիր: Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշի քաղաքի Խաչատուր Աբովյանի անվան հիմնական դպրոցի կահավորում», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական դպրոցների և հատուկ կաբինետների կահավորում», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի Տող գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցում», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունի քաղաքի Վ. Խաչատրյանի, Վ. Արզումանյանի և ազատամարտիկների փողոցներով անցնող կոլեկտորների կառուցման հեղինակային հսկողություն», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշի քաղաքի հանրային գրադարանի համար համակարգիչների ձեռքերում», «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկան կենտրոնի դիալիզի և նեֆրոլոգիայի բաժանմունքի վերանորոգում», «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի ներքին Ծաղկավան գյուղի միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում» ծրագրերը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Նորատուզի սուրբ Աստվածածին եկեղեցու վերակառուցում» ծրագիրը:

«Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգու վերանորոգում, վերակառուցում և պահպանում» ծրագիրը.

Ամերիկայի հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Զանգակատում գյուղում ագրոսպասարկման կենտրոնի կառուցում» ծրագիրը.

«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարալիկ-համայնք» ծրագիրը.

ԱՄՆ-ի «Հայ կրթական հիմնարկություն» հասարակական կազմակերպության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Արցախի համալսարանի» հանրակացարանի երկու հարկի վերանորոգում» ծրագիրը.

«Գորիս» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գորիս քաղաքի «Հին Գորիս» բնակատեղիի սուրբ Աստվածածին (1771թ.) եկեղեցու վերանորոգում» ծրագիրը.

«Շիրակ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի արփենի համայնքի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքների իրականացում» ծրագիրը.

«Վորլդ Վիժն Ինտերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Կաթի հավաքման մեքենայի տրամադրում

«Աստղ-կաթնամթերքի արտադրության» սպառողական կոոպերատիվին», «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի խմելու ջրի խողովակաշարի վերանորոգում», «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի թիվ 1 ներառական կրթությամբ միջնակարգ դպրոցի մասնակի վերանորոգում», «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Բանավան թաղամասի մանկապարտեզի, համայնքային կենտրոնի և երաժշտակա դպրոցի ջեռուցման համակարգի կառուցում», «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ջաղացաձոր և Շատջրեք համայնքներում խաղահրապարակների կառուցում», «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Տորֆավան համայնքի ոռոգման համակարգի վերանորոգում», «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ակունք համայնքի մանկապարտեզի վերանորոգում», «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի թիվ 4 միջնակարգ դպրոցի սանհանգույցների վերանորոգում» ծրագրերը.

«Երևանի ռոտարի ակումբ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղքի թիվ 16 մանկապարտեզի վերանորոգում» ծրագիրը.

Երևանի հայ ավետարանական մկրտական քրիստոնյաների եկեղեցու կողմից իրականացվող «Մանուկների բարեգործական ամառային ճամբար» ծրագիրը:

«Հայ-ֆրանսիական միջազգային առողջապահական ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Գորիսի սրտաբանական կենտրոնի տարածքի բարեկարգում, կահավորում և համալրում» ծրագիրը:

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: